Ի ՀԻՇԱՏԱԿ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի կողմից ամբիոնի ավագ դասախոս Իննա Ադամյանի նախաձեռնությամբ և «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտությամբ սովորող ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել է պոեզիայի և հիշատակի ցերեկույթ՝ նվիրված 44-օրյա պատերազմում անմահացած ԱրՊՀ ուսանողների հիշատակին:

Ներկաները հարգանքի տուրք են մատուցել ի հիշատակ հանուն հայրենյաց նահատակված հերոսների:

Խոսելով միջոցառման նպատակի մասին՝ նախաձեռնող Իննա Ադամյանը կարևորել է այն կրթական և դաստիարակչական տեսանկյուններից՝ նշելով, որ միջոցառման ընթացքում ուսանողների կողմից հնչել են ռուս գրողների այնպիսի ստեղծագործություններ, որտեղ հեղինակներն անդրադարձել են Արցախին, հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությանը:

«Նման միջոցառումները կրթադաստիարակչական մեծ նշանակություն ունեն: Այսօրվա մեր միջոցառումը յուրահատուկ ուսուցողական դաս էր, որը յուրովի սովորեցնում է սիրել հայրենիքը՝ Արցախը»,-նշել է Ի. Ադամյանը՝ հավելելով, որ հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը, ռուս հեղինակների սերը առ Արցախ արտացոլվել է նաև ռուս գրականության մեջ տարբեր ժամանակշրջաններում, որի մասին փաստող ստեղծագործություններն այսօր հնչեցրին մեր ուսանողները:

Միջոցառման ընթացքում հնչել են ելույթներ, ռուս գրականության դասական և ժամանակակից հեղինակների ստեղծագործություններից ասմունք, երաժշտական կատարումներ, նաև հայ գրականության գոհարներից՝ թարգմանված ռուսերեն:

Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Ինգա Հակոբյանը, կարևորելով միջոցառման նշանակությունը, նշել է. «Չնայած առկա դժվարություններին՝ մեր բոլորիս սուրբ պարտքն է ապրել և արարել Արցախում՝ այն սուրբ հողում, որտեղ մեր տղաների արյունն է հեղվել հանուն հայրենիքի պաշտպանության: Ապրել, արարել և հավերժ հարգել նրանց սուրբ հիշատակը՝ սա պետք է լինի բոլորիս համար գերակա մեր բոլոր աշխատանքներում»:

«Ներկա իրավիճակում եթե մեր ուսումնական հաստատություններում ուսանողների կողմից հնչում է ասմունք, երգ ու երաժշտություն, ուրեմն մեր ոգին ամուր է, մեզ կոտրել չի լինի»,-նշել է ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը՝ բարձր գնահատելով միջոցառումը:

«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱՋՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Անժելա Շահանց,
լրագրություն 2-րդ կուրս

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Քո ժամանակը

№ 2 ՄԱՐՏ 2022

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԱՐԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Արցախի պետական համալսարան է այցելել Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի Արցախի մասնաճյուղի ղեկավար Խաչատուր Հայրապետյանը, ուսանողներին ներկայացրել Թումո կենտրոնի գործունեությունը և հանդես եկել աշխատանքի առաջարկով:

ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը շնորհակալություն է հայտնել Խ. Հայրապետյանին ԱրՊՀ հետ համագործակցելու և ուսանողներին նման հնարավորություն ընձեռելու համար՝ բարձր գնահատելով Թումո կենտրոնի գործունեությունը:

«Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը փնտրում է մոտիվացված, խանդավառ և տեխնոլոգիաների ոլորտում բազային գիտելիքներ ունեցող մասնագետների, ովքեր պատրաստակամ են փորձարկել նոր տեխնոլոգիաներ՝ մեկնարկելով իրենց կարիերան որպես ուսուցանող մարգիչ Ստեփանակերտի Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում», - նշել է կենտրոնի ղեկավարը:

Ցանկացողները գրանցվելու համար կարող են դիմել Թումո կենտրոնին:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ԵՆ ՁՆԱՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հանրապետությունում ձյան առատ տեղումների պատճառով ստեղծված դժվարությունները հաղթահարելու նպատակով իրականացվում են ձնամաքրման աշխատանքներ:

Արցախի պետական համալսարանի ուսանողներն ու աշխատակիցները ևս ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ ձնամաքրման աշխատանքներ են իրականացրել համալսարանի տարածքում: Ուսանողական կառույցների պատասխանատուների հավաստմամբ՝ աշխատանքները շարունակական են լինելու՝ ըստ անհրաժեշտության:

Չնայած տեղումների հետ կապված ստեղծված դժվարություններին՝ համալսարանում պարապմունքները շարունակվում են բնականոն հունով: Լսարաններն ապահովված են ջեռուցմամբ, առկա են անհրաժեշտ բոլոր պայմանները՝ ուսուցումն արդյունավետ կազմակերպելու համար:

Ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի հավաստմամբ՝ այս օրերին ուսանողների հաճախումների ամենօրյա մշտադիտարկում է իրականացվում, որի արդյունքների վերլուծությունները վկայում են հաճախումների թվի օրըստօրե աճ, ինչը նշանակում է, որ գործընթացն աստիճանաբար լիարժեք փուլ է մտնում:

ԱՐՑԱԽ, ՄԵՐ ՏՈՒՆ

Ազգային արժեքների պահպանում ու ամրապնդում, միասնականություն, ավանդույթների ու ժողովրդական իմաստնության վերարժևորում ժամանակակից զարգացումների համատեքստում, ինքնության պահպանում, դժվարություններին դիմակայելու, բայց հայրենի հողից չհեռանալու անկոտրում կամք. սրանք այն հիմնական շեշտադրումներն էին, որոնք ընկած էին մարտի 7-ին կազմակերպված «Արցախ, մեր տուն» խորագրով միջոցառման գաղափարական հիմքում:

Միջոցառումը նախաձեռնել էր ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Արմինե Խաչատրյանը՝ ուսանողների մասնակցությամբ: Ազգային երգ, պար, ասմունք, Արցախի բանահյուսական տարբեր ժանրերից հատվածներ ներկայացվեցին ուսանողների և մշակութային համույթների կողմից: Միջոցառումը մեկնարկեց լռության րոպեով՝ հարգելով պատերազմներում անմահացած հերոսների հիշատակը:

Ողջույնի խոսքում Արմինե Խաչատրյանը նշեց, որ միջոցառումը խորհրդանշական իմաստ ունի, այն է՝ գարնանամուտն սկսել ազգայինի շեշտադրմամբ:

«Միջոցառման նպատակն էր հետ նայել դեպի ժողովրդական իմաստությունը, տառապանքի ու ճակատագրի վայրիվերումներին դիմակայած արցախցու արտահայտած խորիմաստ մտքերը, արցախցուն համախմբման կոչ անել: Եկեք միասնական լծվենք ազգային արժեքների պահպանման, հարստացման և երկրի շենացման գործին: Իհարկե, անհրաժեշտ է առաջ նայել, կատարելագործվել ժամանակին համահունչ ամեն ոլորտում, սակայն երբեք չպետք է մոռանալ, որ դարեր ի վեր գոյատևել ենք շնորհիվ լեզվի, հավատքի, գրի ու մատյանի, ազգային ավանդական արժեքների: Ես հենց այդպես եմ ցանկացել շնորհավորել հայ կնոջը, հայ մորը, նրան մղելով դեպի իր ակունքները, դեպի նախնյաց ակունքները, որտեղից ամենամաքուր ջուրը կարելի է խմել»,-նշել է Ա. Խաչատրյանը:

Բեմի գեղարվեստական ձևավորմամբ կերպարվեստի ամբիոնի դասախոս Մարինե Ղալայանցը ևս արվեստի լեզվով հանդիսատեսին իր ասելիքն ուներ. «Ազգայինը պետք է գերակա լինի բոլոր ծեռնարկումներում, որովհետև այն ինքնության պահպանման կարևորագույն երաշխիքներից է»:

Մասնակից ուսանողների խոսքով՝ միջոցառմանը երկար են պատրաստվել, որը մի քանի անգամ հետաձգվել է. նախ՝ խանգարել է կորոնավիրուսը, ապա՝ քննաշրջանը, բայց գաղափարն ու յուրահատկությունը թույլ չէին տալիս այն կյանքի չկոչել:

«Ի վերջո ազգայինի նկատմամբ սերն ու հետաքրքրությունը, համախմբվածությունը, արժեքների գնահատումը ծնեցին այս միջոցառումը, որն անսպառ սիրով և նվիրումով ընծայում ենք հայ կնոջը, ով զինվոր է դաստիարակում, ազգին ծառայող բժիշկ ու իրավաբան: Նպատակը Արցախյան ազգային մշակույթի վերարժևորումն էր, որն այս օրհասական ժամանակաշրջանում առավել քան կարևոր է, նաև միտված էր ազգայինի տարածմանը»,-նշել է ուսանողուհի Աստղիկ Բաբայանը:

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ 125-ԱՄՅԱԿԻՆ

Մարտի 13-ին լրացել է հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակը: Տարին հոբելյանական է, և Չարենցին նվիրված միջոցառումները կշարունակվեն ողջ տարվա ընթացքում: Մարտի 14-ին, ԱրՊՀ գրադարանի և ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել է գրական-գեղարվեստական միջոցառում՝ նվիրված Եղիշե Չարենցին:

Գրադարանի վարիչ Հասմիկ Հարությունյանի խոսքով՝ Եղիշե Չարենցի գրքերը ընթերցողների համար ամենաշատ պահանջարկ ունեցող գրքերի ցանկում են, ուստի օրը առիթ է՝ անդրադառնալու Չարենցին, արժևորելու նրա գրական ժառանգությունը և ընդգծելու ստեղծագործությունների արդիական նշանակությունը:

ՈւԳԸ նախագահ Տաթևիկ Ղահրամանյանի խոսքով՝ Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակի առթիվ՝ որպես ուսանողության գնահատանքի բաժին երախտիք, օրը որոշել են դարձնել չարենցյան՝ անդրադառնալով հանճարի կյանքին:

«Նաիրյան երկրի մորմոքը սրտում, հայոց արևահամ բառը շուրթերին վառվելիս, հայացքը՝ իր կապուտաչյա հայրենիքին վառվեց, վառվեց ու մնա՜ց... Հայ գրականության ծիրում նրա աստղը շողա՜ց ու շողա՜ց ու իր պայծառությամբ ու մեծությամբ հասավ արեգակնային չափերի: Իր ժամանակում հորդորեց մարդկանց դառնալ ժամանակի շունչը, մինչև Նա դարձավ բոլոր ժամանակների զորեղ ու թարմ շնչառությունը»,-նշել է նա:

Միջոցառմանը ուսանողները ներկայացրել են Չարենցի կյանքն ու գործունեությունը, պատմել նրա հետ կապված մեծերի գրի առած հուշերից, ասմունքել բանաստեղծություններ:

ԱԿՏԻՎ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿԱԼԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՌՕՐՅԱ

Մարտի 4-ին տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված հերթական միջոցառումը նպատակ ուներ ուսանողների իմացությունները տնտեսագիտությունից ստուգել «Տնտեսագիտական այլ կերպ» խաղ-մրցույթի միջոցով, որին մասնակցել են ֆակուլտետի ուսանողներից բաղկացած տարբեր թիմեր:

Մրցույթին ներկա էին նաև տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանն ու նույն ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Նարինե Մելքումյանը:

«Նման միջոցառումների կազմակերպումը արդյունավետ է երկու տեսանկյունից՝ և՛ ուսանողների կողմից մասնագիտական հիմնահարցերի ճիշտ մոտեցումների ցուցաբերման, և՛ տրամաբանական մտածողության տեսանկյունից, բացի այդ, այն համախմբում է ֆակուլտետի ուսանողներին՝ հնարավորություն տալով նաև առաջին կուրսեցիներին ներգրավել ուսանողական ակտիվ կյանքին»,-նշել է ֆակուլտետի դեկան Ռ.Մանգասարյանը՝ պատվոգրերով պարգևատրելով մրցույթի արդյունքում մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերին: